ԵՂԻՍԵԻ ԵՐԵՔ ԱՂՈԹՔՆԵՐԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. Դ ԹԱԳԱՎՈՐԱՑ 6.8-23

8 Ասորիների թագավորը պատերազմում էր Իսրայելի դեմ: Իր ծառաների հետ խորհուրդ արեց՝ ասելով. Այսինչ կամ այնինչ տեղը պիտի բանակ դնեմ: 9 Բայց Աստծու մարդը լուր ուղարկեց Իսրայելի թագավորին՝ ասելով. Զգուշացի՛ր այսինչ տեղով անցնելուց, որովհետև ասորիներն այնտեղ բանակ են դրել: 10 Եվ Իսրայելի թագավորը մարդ ուղարկեց այն տեղը, որի մասին ասել էր Աստծու մարդը և նրան զգուշացրել. և նա այդ տեղից շատ անգամ զգուշացավ: 11 Ասորիների թագավորի սիրտը փոթորկվեց այդ բանից. կանչեց իր ծառաներին և ասաց նրանց. Ինձ չե՞ք իմացնի, թե մեր մարդկանցից ո՞վ է Իսրայելի թագավորի հետե: 12 Եվ նրա ծառաներից մեկն ասաց. Ոչ ոք, տե՛ր իմ թագավոր.

Իսրայելում գտնվող Եղիսե մարգարեն է Իսրայելի թագավորին հայտնում ամեն բան, ինչ դու խոսում ես քո ննջասենյակում: 13 Եվ նա ասաց. Գնացե՛ք ու տեսե՛ք, թե նա որտեղ է, որ ես մարդ ուղարկեմ ու բռնել տամ: Եվ նրան հայտնեցին ու ասացին. Դոթայիմում է:

14 Ձիեր, կառքեր և մեծ զորք ուղարկեց այնտեղ, որոնք գիշերը եկան ու պաշարեցին քաղաքը: 15 Աստծու մարդու ծառան առավոտ կանուխ վեր կացավ ու դուրս ելավ. ահա զորքը, ինչպես նաև ձիերն ու կառքերը շրջապատել էին քաղաքը, և ծառան ասաց նրան. Վա՜յ, տե՛ր իմ, ի՞նչ անենք: 16 Նա էլ ասաց. Մի՛ վախեցիր, որովհետև մեզ հետ եղողներն ավելի շատ են, քան նրանց հետ եղողները: 17 Եվ Եղիսեն աղոթք արեց և ասաց. Ո՜վ Տեր, բացի՛ր սրա աչքերը, որ տեսնի: Եվ Տերը բացեց ծառայի աչքերը, և նա տեսավ, որ Եղիսեի շուրջը սարը լիքն էր հրեղեն ձիերով ու կառքերով: 18 Եվ երբ ասորիներն իջան Եղիսեին մոտիկ, նա աղոթեց Տիրոջն ու ասաց. Աղաչում եմ, այս ժողովրդին հարվածի՛ր կուրությամբ: Եվ Տերը Եղիսեի խոսքի համաձայն նրանց հարվածեց կուրությամբ: 19 Եվ Եղիսեն ասաց նրանց. Այս չէ ճանապարհը, և քաղաքն էլ այս չէ: Եկե՛ք իմ ետևից, և ես ձեզ կտանեմ այն մարդու մոտ, որին դուք որոնում եք: Եվ նա նրանց տարավ Սամարիա: 20 Եվ երբ եկան Սամարիա, Եղիսեն ասաց. Ո՜վ Տեր, բա՛ց սրանց աչքերը, որ տեսնեն. և Տերը բացեց նրանց աչքերը, և նրանք տեսան, որ իրենք ահա Սամարիայում են:

Այսօր մենք կանդրադառնանք Եղիսեի երեք աղոթքներին ընդդեմ վախի, հոգևոր կուրության և խավարի ուժերի դեմ: Մենք մուտք ենք գործում աղոթքի և ծոմի շրջան, և իմ սիրտի ցանկությունն է, որ մեր եկեղեցական ընտանիքը ազատություն գտնի այդ երեք ոլորտներում: Սրանք այն տարածքներն են, որտեղ թշնամին ամեն օր թիրախավորում է հավատացյալներին:

Կա հոգևոր աշխարհ, և մենք հոգևոր պատերազմի մեջ ենք: Աստծո արքայությունը և Սատանայի թագավորությունը: Մեր պատերազմը արյան ու մարմնի դեմ չէ. Եթե այդպես է, ուրեմն դուք թույլ եք տվել, որպեսզի սատանայի խավար ուժերը մուտք գործեն ձեր կյանք: Սա հակամարտող թագավորությունների պատերազմ է՝ Աստծո և Սատանայի թագավորության: Հովհաննես 18-ում Հիսուսը խոսում է այն մասին, թե ինչպես Իր թագավորությունն այս աշխարհից չէ: Եփեսացիս 2-ում խոսվում է մի թագավորության մասին, որի տիրակալը Սատանան է՝ օդի իշխանը և մենք այս երկու թագավորությունների միջև պատերազմի մեջ ենք:

I. ԱՂՈԹՔ ՎԱԽԻ ԴԵՄ:

*15 Աստծու մարդու ծառան առավոտ կանուխ վեր կացավ ու դուրս ելավ. ահա զորքը, ինչպես նաև ձիերն ու կառքերը շրջապատել էին քաղաքը, և ծառան ասաց նրան. Վա՜յ, տե՛ր իմ, ի՞նչ անենք: 16 Նա էլ ասաց. **Մի՛ վախեցիր,** որովհետև մեզ հետ եղողներն ավելի շատ են, քան նրանց հետ եղողները:*

- ***Հավատքն ու վախը չեն կարող զբաղեցնել նույն տարածքը:***

  Հավատքը նկարագրված է Եբրայեցիս 11.1-ում որպես «աներևույթ բաների ապացույցը»: «Որովհետև հավատով ենք ընթանում և ոչ թե տեսողությամբ»: Բ Կոր. 5:7

  *2 Տիմ. 1.7 - Որովհետեւ Աստուած չ'տվեց մեզ **երկչոտութեան հոգի**, (deilia, Դայլիա) այլ զօրութեան եւ սէրի եւ զգաստութեան (self-control):*

- ***Վախի փոխարեն Հոգին մեզ տալիս է «զորություն»:***

  Եսայի 41:10 – Մի՛ վախեցիր, որովհետև ես քեզ հետ եմ, մի՛ զարհուրիր, որովհետև ես քո Աստվածն եմ: Ես քեզ կզորացնեմ և կօգնեմ քեզ, նաև քեզ նեցուկ կլինեմ իմ արդար աջով:

  Հռ. 8:15 – Որովհետև դուք ծառայությա՛ն (bondage) հոգին չստացաք, որ դարձյալ վախենաք, այլ որդեգրությա՛ն հոգին ստացաք, որով աղաղակում ենք. «Աբբա՛, Հայր»:

- ***Երբ Աստվածաշունչն ասում է՝ «մի՛ վախեցիր», վախ բառը վերաբերում է սարսափին կամ խուճապին:***

  Սաղմոս 34:4 – Ես դիմեցի Տիրոջը, և նա պատասխան տվեց ինձ և իմ ամեն սարսափից ազատեց ինձ:

  Ելից 14:13-14 – 13 Մովսեսն ասաց ժողովրդին. «Մի՛ վախեցեք, կանգնե՛ք ձեր տեղում և տեսե՛ք Տիրոջ փրկությունը, որ այսօր կանի ձեզ համար. որովհետև այսօր ձեր տեսած եգիպտացիներին այլևս հավիտյան չեք տեսնելու: 14 Տերը պիտի պատերազմի ձեզ համար, իսկ դուք հանգի՛ստ եղեք»:

- ***Ի՞նչ էր մտածում Եղիսեն:***

  Սաղ. 91:1-7 - 1 Բարձրեալի ծածկոցի տակ բնակողը Ամենակարողի շուքի տակ է հանգստանում: 2 Ես կասեմ Տիրոջը. Իմ ապաւէն եւ իմ ամրոց, իմ Աստուած, որին ես յուսացած եմ: 3 Որովհետեւ նա կփրկէ քեզ որսողի որոգայթիցը, չար ժանտամահիցը: 4 Նա կծածկէ քեզ իր փետուրներովը, նորա թեւերի տակ ապահով կլինիս. նորա ճշմարտութիւնը ասպար է եւ զրահ: 5 Դու չես վախենա գիշերի զարհուրանքից. այն նետիցը որ թռչում է ցերեկը: 6 Այն ժանտախտիցը, որ խաւարումը շուռ է գալիս. այն հարուածիցը, որ սատկեցնում է կէս օրումը: 7 Հազար հոգի քո կողմիցը կընկնեն, եւ տասն հազար՝ քո աջ կողմիցը. բայց քեզ չի մօտենալ:

  11 Որովհետեւ իր հրեշտակներին հրամայել է քեզ համար, որ պահեն քեզ քո բոլոր ճանապարհներումը: 12 Նորանք ձեռների վերայ կառնեն քեզ, որ քո ոտը քարի չդպցնես:

- ***Ահա թե ինչու մենք աղոթում և ծոմ ենք պահում 21 օր, որպեսզի կարողանանք հաղթահարել վախը, որը կաթվածահար է անում մեր հավատքը:***

II. ԱՂՈԹՔ ՀՈԳԵՎՈՐ ԿՈՒՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ:

17 Եվ Եղիսեն աղոթք արեց և ասաց. Ո՜վ Տեր, բացի՛ սրա աչքերը, որ տեսնի:

Եփ. 1:17-18 - Որ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուածը՝ փառքի Հայրը տա ձեզ իմաստութեան եւ յայտնութեան հոգի՝ իր գիտությունով. Որ ձեր սրտերի աչքերը լուսաւորուելով՝ գիտենաք, թէ ի՞նչ է նորա կոչումի հույսը, եւ ի՞նչ է իր ժառանգության փառաւոր մեծությունը սուրբերում.

Հայտնություն 3:18-19 – 18 Ես քեզ խորհուրդ եմ տալիս. գնի՛ր ինձնից կրակի մեջ թրծված ոսկի, որ հարստանաս, և սպիտակ զգեստներ, որ հագնես, որպեսզի քո մերկությունը չերևա, և չամաչես. ***աչքերիդ դեղ (օծիր anoint) դիր, որ տեսնես:*** *19 Ում ես սիրում եմ, հանդիմանում եմ և խրատում: Ուրեմն նախանձախնդի՛ր եղիր և ապաշխարի՛ր:*

III. ԱՂՈԹՔ ԽԱՎԱՐԻ ՈՒԺԵՐԻ ԴԵՄ:

18 Եվ երբ ասորիներն իջան Եղիսեին մոտիկ, նա աղոթեց Տիրոջն ու ասաց. Աղաչում եմ, այս ժողովրդին հարվածի՛ր կուրությամբ: 20 Եվ երբ եկան Սամարիա, Եղիսեն ասաց. Ո՛վ Տեր, բա՛ց սրանց աչքերը, որ տեսնեն. և Տերը բացեց նրանց աչքերը, և նրանք տեսան, որ իրենք ահա Սամարիայում են:

- ***Մենք ներքաշված ենք հոգեւոր պատերազմի մեջ:***

Եփ. 6:12 – Որովհետև մեր պատերազմն արյան և մարմնի դեմ չէ, այլ իշխանությունների և պետությունների դեմ, այս խավար աշխարհի տիրակալների դեմ, երկնքում գտնվող չար ոգիների դեմ:

- ***Մենք այս պատերազմը հաղթանակի համար չենք պայքարում. մենք պայքարում ենք հաղթանակից.***

Կող. 2:14-15 – 14 Եվ ջնջեց մեր դեմ դատավճռի ձեռագիրը և այն մեջտեղից վերացրեց ու խաչափայտին գամեց, 15 իշխանություններին և պետություններին մերկացնելով՝ հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց իրանում.

Ա Հովհաննես 5:4-5 – որովհետև ամեն ոք, ով Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին: Սա՛ է այն հաղթությունը, որ աշխարհին հաղթեց, այսինքն՝ մեր հավատը: Եվ ո՞վ է, որ աշխարհին հաղթում է, եթե ոչ նա, ով հավատում է, որ Հիսուսն Աստծու Որդին է:

- ***Դևերը հոգու դեմ պայքարում են մտածմունքների միջոցով, որոնց պետք է դիմակայել Աստծո Խոսքով և Սուրբ Հոգու աղոթքով:***

Հուդա 1:20 – Բայց դուք, սիրելիներ, ձեր անձերը ձեր սուրբ հավատի վրա՛ կառուցեք՝ Սուրբ Հոգով աղոթելով:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: